

Թիւ 19085
Ցուլիս 5, 1967

Անձնարդ
Տիար Բննիամին Նուրիկեան
Միքրոնկլեյք -

Սիրելի Պրե. Նուրիկեան,

Առաջնորդ Արրազան Հայրը ստացած է Ցուլիս 26, 1967 թուակիր
Ձեր նամակը Թիմական Խորհուրդին ևս խորհրդակցարար օրոշեցին որ
Մենք եւ Թիմական Խորհուրդի անդամ Տիար Հայ Նահպաղեան Հնագագոր-
ծորութիւնը եպացը Խարբ մեր ծովագուրդի խնդրանուն եւ ուղղութիւն
առնել առնուելիք կանոնական ժայլերաւու

Հանեցեց մեզ հազորդել թէ երբ կարեցի է տեսակցութիւն ու-
նենալ առանձակե հազմուած յանձնաբաւրի անդամներաւն ևս

Վասահ ենք թէ կարելի պիտի ըլլայ նկատի առնել կացութեան
րույնը պարզանեցր եւ մեր խորհրդակցութեանց իրքիւնց պա-
շտա թելադրութիւններ ընել Առաջնորդ Արրազանին եւ Թիմական Խո-
րհուրդին

Սիրոյ սղջունիւ

ՎԱԶԳԻՆ Ս.ՎՐԴ.ԳԸՄՌԸՍԼԵԱՆ
Առաջնորդի Փախադր



ANCIENT RITES—The Rev. Leon Hekimian, (left) pastor of St. Mary's Armenian Apostolic Church, 1184 Ocean Ave., Elberon, and visiting pastor, the Rev. Leon Arakelian, bless the grapes at the church in ancient ceremonies yesterday. More than 250 people attended the blessing and holy liturgy. The grapes are donated by members of the church and after they were blessed, they were distributed to the congregation. A picnic followed the ceremony. The Armenian church has performed this ceremony for about 1,500 years. The Gomidas Choir participated in yesterday's ceremonies.

Long Beach Press

Յունիս 26, 1967, Սբրենկ Լէյք, Ն.Ճ.

Սիրելի Առաջնորդ Թուրքում Սրբազնութեամբ՝ ստացայ

Անցեալ ամսուն երբ Գալեֆորնիա կը գտնուեի այցելութեամբ՝ ստացայ
Մայիս 12ի Զեր նամակին լուսատիպ մէկ օրինակը, զոր մեր Զաւէնը դրկած
էր ինձի, բնագերը յանձնելով մեր համայնքի նորակազմ յանձնախումբին,
որուն իբրեւ ատենապետ նշանակած են զիս, ինչպէս գիտէք:

Քանի մը օրէ ի վեր տուն վերադարձած ըլլալով՝ մեր յանձնախումբին
հետ խորհրդակցելէ ետք, պարտք կը զգամ պատասխանել Զեր նամակին:

Այդ գիրով կը հաղորդէք մեզի թէ Զեր "Յաջորդ որոշումը պիտի ըլլայ
նշանակել առժամեայ յանձնախումբ մը որուն պիտի յանձնէք նաեւ գործու-
նէութեան որոշ ուղեգիծ մը Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնագրութեան պա-
հանջքներուն համաձայն: "

Շիտակը՝ զարմանքով կը նկատենք սակայն, որ մինչեւ հիմա դեռ նշանակած
չէք Զեր յիշած յանձնախումբը, եւ կը ցաւինք ըսելու որ Զեր երկու նամակ-
ներով ալ - Ապրիլ 7 եւ Մայիս 12, 1967 - համակրանքի եւ քաջալերութեան
խօսքն անգամ չեք ըրած կզպէրի Փարքի հայ շրջանակին մէջ Հայաստանեայց
եկեղեցի մը ունենալու մեր հաւաքական բաղձանքին հանդէպ, որուն մասին
գրած էինք Զեզի, Ապրիլ 17ի մեր նամակով:

Կոյն բաղձանքը շեշտելու պէտք չենք զգար այս անգամ: Բայց Զեր յիշած
յանձնախումբին նշանակումէն առաջ մեզի համար անհրաժեշտ է գիտնալ թէ - Ա.
Պուք եւ թեմական խորհուրդը արդեօք սրտանց համաձա՞յն էք նիւ ձըզիի այս
կարեւոր համայնքին մէջ հայ եկեղեցի մը կազմակերպելու մեր մտածումին,
որուն համակիր են եւ մինչեւ հիմա իբրեւ անդամ արձանագրուած են 75
հայ տուներ, որոնց ցանկը ճամբած ենք Զեզի, ասկէ առաջ: Բո Ու եթէ
դրական է Զեր տալիք պատասխանը՝ կը հաճիք որոշապէս ըսել մեզի թէ մեր
գաղափարը կարենալ իրականացնելու համար - քանի որ պէտք ունինք Զեր աջակ-
ցութեան - արդեօք պիտի ուզէի՞ք ժախել կը պատասխանը - որ մեր
ժողովական նուէրներովն ու շանքերովը գնուած է - եւ գումարը յատկա-
ցընել յարմար շենքի մը գնումին, կզպէրի Փարքի մէջ, որ կեդրոնն է այս

Հըջանի հայութեան: Ըսել կուզենք աւելի ժողովրդական եկեղեցին մը, որուն
գործերը ժողովուրդը ինքը պիկը վարէ Զեր առաջնորդական հակողութեան տակ,
եւ վերջ տալ սարէն ձորէն մէկտեղուած անուանական անփամներով իբրեւ թէ
կազմուած "մատոչո" անունով ~~լուսութեան~~ խրտուիլակի մը որ՝ դուք ալ գիտէք
թէ քանի մը տարիէ ի վեր կը գտնուի "Հոգեւոր մատակարար"ի ծիծաղեկի տիպ-
ղոսով ճանչելուած շահամոլ եւ անպատասխանատու մէկու մը տիրապետութեան
տակ, որ ինքունքը իբրեւ "փեսթը" կը ճանուցանէ ամէն ամառ, "Լօնկ Պըքէնչ
Րէքորտ" օրաթերթին մէջ, ինչպէս որ կը փաստէ ներփակուած լուսանկարը,
փըցուած այդ թերթի Օգոստ + 15, 1966ի թիւնու եւ այս զաւեշտը կը կըկնուի
յայտնապես
ամէն տարի, Առաջնորդաբանի թուլտուութեամբ, Սիոն Սրբազնի օրերէն ի վեր,
պատիւին
ամէն անգամ ալ մեր գաղութին ի վնաս: Այս զաւեշտին հեղինակը կեղծ "հո-
գիւ" մըն է պարզապէս որ կը յոխորտայ, առանց ամչնալու, թէ "աշխարհի ամէ-
ն էն մեծ ուժն անգամ չի կընար զիս այստեղէն դուրս հանել", եր իսկ խօս-
քովը: Դուք ի՞նչ անուն կտւտաք այս արտառոց խօսքին եւ անոր տուն տուող
փտտած մտայնութեան:

Խորապէս ցաւալի է որ Առաջնորդաբանը, քանի մը տարիէ ի վեր, դեռ քաջու-
թիւնը ունեցած չէ մաքրագործելու նշանակածքին մէջն ու շուրջը
Այլ
տիրող անբաղձաւի կացութիւնը:

Կը խնդրենք որ դուք եւ թեմական խորհուրդը լըջօքէն նկատի առնէք
վերը տրուած հարցումները, եւ մեզի ըսէք յստակօրէն - "Այս" կամ "Ոչ".
ո ըպէսզի մենք ալ մեր կարգին Զեր պատասխանը հաղորդենք մեզի համակեր
ժողովուրդին, եւ ըստ այնմ շարժինք: Վստահ ենք թէ չուշանար Զեր պատաս-
խանը:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ խորին յարգանքներով՝

Բ. Նորիկի Մակար

Յ. Գ. Այս առթիւ մեր համայնքին մասին պէտք եղած տեղեկութիւնները
Զեզի կընայ տալ նաեւ թեմական խորհուրդի անդամ Պը. Լուտվիկ Շահբազեանը, որ
մօտէն թանօթյայս գաղութի հայ եկեղեցին խնդրոյն:

ԵԱՆՈԹ - Այս գիրը ուղղուած է թէ Զեզի եւ թէ պական խորհուրդին:

Բ. Ն.

P. NOORIGIAN

414 WORTHINGTON AVE.
SPRING LAKE, N. J. 07762